

**ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԷՊՈՍԸ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ
ԼԵԶՎԱՍՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑ**

ԹԱԹՈՒԼ ԱՍՈՅԱՆ, ՆՈՐԱՅՐ ՊՈՂՈՍՅԱՆ

Ամփոփում: *Լեզվաբանությունը՝ իբրև առանձին գիտություն, ձևավորվեց 19-րդ դարում: Ժամանակի ընթացքում առաջ եկան լեզվաբանական նոր ուղղություններ և միջգիտակարգեր: Այսօր արդեն լեզվաբանությունը միայն լեզվական միավորների և քերականական կառուցվածքի ուսումնասիրությամբ չի զբաղվում: Այն ոչ միայն գիտությունների ներկայացման միակ յիարժեք միջոցն է, այլև ժողովրդի հոգեբանության, պատմության, մշակույթի, ազգային նկարագրի և գոյության արտահայտիչը: Ժողովրդի, ազգի հետ կապված այդ իրողությունները կարելի է ցուցադրել լեզվի և մտածողության սերտ միասնության՝ լեզվամտածողության միջոցով:*

Այս հոդվածում քննվում են ազգային լեզվամտածողության հետ կապված որոշ հարցեր ժողովրդական էպոսների համատեքստում:

Հիմնաբառեր՝ *լեզվաբանություն, էպոս, լեզվամտածողություն, պատմություն, մշակույթ, ժողովրդական հոգեբանություն, լեզվական միավոր, քերականական կառուցվածք*

Թեև աշխարհի ու իր ապրած միջավայրի վերաբերյալ մարդու պատկերացումները գալիս են հազարամյակների խորքերից, և շատ դեպքերում օբյեկտիվ պատճառներով դրանք դժվար է գիտական համարել, այնուամենայնիվ գիտությունների ծննդյան ժամանակը 19-րդ դարն է: Լեզվաբանությունն էլ իբրև արդեն առանձին գիտություն, ձեռնամուխ եղավ իր «տնտեսությունը» կարգի բերելուն և լեզվական ուսումնասիրությունների նոր ուղղությունների ու հնարավո-

րությունների փնտրտուքին, զարգացման հեռանկարների մշակմանը: Այսօր մարդկային գործունեության բոլոր ոլորտներում այնքան գիտելիքներ են կուտակվել, որ գիտությունները պարտադրաբար ընթանում են փոխհատման ճանապարհով, որը հնարավորություն է տալիս ապահովելու ուսումնասիրությունների համակողմանիությունն ու համակարգայնությունը, երևոյթները քննելու նորովի, ընդլայնելու մարդկային իմացության սահմանները: Այդպես են ձևավորվել մի շարք այնպիսի միջգիտակարգեր և ժամանակակից լեզվաբանական ուղղություններ, ինչպիսիք են հաղորդակցական լեզվաբանությունը, հոգելեզվաբանությունը, հանրալեզվաբանությունը, համակարգչային լեզվաբանությունը, լեզվամշակութաբանությունը, ճանաչողական լեզվաբանությունը և այլն: Լեզվաբանությունն այլևս չի դիտարկվում որպես սոսկ լեզվական միավորների կամ լեզվի քերականական կառուցվածքի ուսումնասիրության ոլորտ: Դա կսահմանափակեր լեզվաբանության տեսադաշտն ու հնարավորությունները, ուսումնասիրությունները կդարձներ միակողմանի, միապաղաղ ու անհետաքրքիր: Եվ նաև բացի նրանից, որ լեզուն գիտությունների արտահայտման ու ներկայացման միակ միջոցն է, այլև հոգեբանություն է, պատմություն, մշակույթ, ազգային նկարագրի ու գոյության հիմնասյուն:

Լեզվաբանական ուսումնասիրությունները կարող են բացահայտել «բառային և քերականական իմաստների գոյացման օրինաչափությունները, գտնել բառերի նախնական իմաստները, քերականական կարգերի տրամաբանական հիմքերը և դրանով իսկ լուսաբանել լեզվի ու մտածողության զարգացման տարբեր էտապներում, տարբեր լեզուների մեջ ու տարբեր ցեղերի (ժողովուրդների, ազգերի) մոտ հասկացությունների գոյացման ընդհանրություններն ու տարբերությունները»¹: Այս մեթոդը Էդ. Ադայանը անվանում է լեզվաբանական հնէաբանություն կամ գաղափարական վերլու-

¹ **Ադայան Էդ.**, Լեզվաբանության հիմունքներ, Եր., 1987, էջ 167-168:

ծություն: Այստեղ մենք կարևորում ենք այն հանգամանքը, որ այս մեթոդի միջոցով հնարավոր է պարզել ազգերի, ժողովուրդների աշխարհընկալման յուրահատկությունները, և թե ինչպես են առարկաները, երևոթյունները, հարաբերությունները ընկալվել ու իմաստավորվել մարդկանց կողմից: Այնուամենայնիվ, ստուգաբանության վրա հիմնված այս մեթոդը մնում է որոշակի սահմանների մեջ և ընդգրկում ու համակարգային բնույթ չունի: Այդ դերն իր վրա է վերցնում վերջին շրջանում ձևավորված լեզվաբանական նոր ուղղությունը՝ ճանաչողական լեզվաբանությունը, «որը լեզվական նյութի նկատմամբ համակարգային նոր մոտեցումների պահանջներ է առաջադրում: Այն ընդգծում է լեզվի դերը աշխարհի նկատմամբ հայեցակարգային մոտեցումների ստեղծման և աշխարհընկալումային գործընթացները համակարգելու մեջ»¹: Լեզուն, փաստորեն, դառնում է կարևորագույն միջոց աշխարհաճանաչման գործընթացում մարդու ձեռք բերած տարաբնույթ գիտելիքների համակարգման համար: Դա նշանակում է նաև, որ լեզուն մարդկային մտածողական գործունեության արտահայտիչն է: Գնահատողական լեզվաբանության խնդիրը գրական տեքստերի ուսումնասիրությունն է, որի օգնությամբ հնարավոր է առանձնացնել, բացահայտել և համակարգել ոչ միայն անհատի, այլև հանրության ու ժողովրդի հոգևոր-մշակութային-քաղաքակրթական բնույթն ու մտածողությունը: Բանն այն է, որ նույն լեզվական նյութի հիմքով ստեղծված թե՛ անհատական, թե՛ կոլեկտիվ ստեղծագործությունները ունենում են լեզվամտածողական ընդհանրություն, իսկ տարբերություններ կարող են հանդես գալ այն դեպքում, եթե գրական երկերը ստեղծված լինեն տարբեր լեզվական հիմքերով: Այլ կերպ ասած՝ տարբեր լեզուներով ստեղծվում են տարբեր լեզվամտածողությամբ տեքստեր: Ինչպես վերը նշեցինք, տարբեր ազգեր, ժողովուրդներ տար-

¹ **Տոնյան Թ.**, Հայերենի տեքստը և լեզվամտածողական արժեհամակարգը, Եր., 2016, էջ 9:

բեր կերպ կարող են ընկալել առարկան, երևույթը, հատկանիշը, հարաբերությունները, որը հանգեցնում է բառախմաստաբանական և քերականական արտահայտչամիջոցների ու կառուցվածքի տարբերությունների:

Այսպիսով, ցանկացած տեքստի ուսումնասիրություն նախևառաջ ենթադրում է լեզվի և մտածողության փոխադարձ կապի ու պայմանավորվածության առանձնահատկությունների բացահայտում ու ներկայացում, իսկ «...տեքստը լեզվի և մտածողության փոխհարաբերություն է, անհատի, հանրության, ազգի, ժողովրդի ինքնաարտահայտման և ինքնահաստատման կարևորագույն միջոց»¹: Լեզվի և մտածողության կապը բնորոշվում է լեզվամտածողություն ընդհանուր հասկացությամբ: Պետք է ասել, որ լեզվի և մտածողության փոխհարաբերությունների հարցերը միշտ էլ եղել են ուշադրության կենտրոնում: Բացի լեզվաբաններից՝ դրանցով զբաղվել են փիլիսոփաները, հոգեբանները, գրականագետները, մշակութաբանները և այլք: Լեզվի և մտածողության կապը սերտ է և միայն տեսականորեն կարելի է դրանք դարձնել առանձին ուսումնասիրության առարկաներ²:

Ժողովրդի, ազգի լեզվամտածողությունն իր ձևաբովանդակային առանձնահատկություններով և ինքնատիպությամբ լավագույնս արտահայտվում է թե՛ բանավոր (կոլեկտիվ, ընդհանուր), թե՛ գրավոր (կոնկրետ, հեղինակային) տեքստերում (ստեղծագործություններում): Բնարկե, էական տարբերություններ կարելի է տեսնել ստեղծագործությունների բանավոր ու գրավոր դրսևորումների միջև: Բնականաբար, բանավոր տեքստերը, որոնք ժողովրդական ծագում ունեն, նախագրային իրողություններ են, դրանց մշակմամբ զբաղվել են սերունդներ, գործընթացը շարունակվել է նաև հետագայում՝ գրային համակարգերի ի հայտ գալուն զուգահեռ, և ժողովրդական ասացողների կողքին արդեն հայտն-

¹ Նույն տեղում, էջ 119:

² Տե՛ս **Աղայան Էդ.**, նշվ. աշխ., Եր., 1987:

վում են գրողները: Մյուս կողմից՝ կոլեկտիվ և հեղինակային պատումների միջև վերաբերմունքային տարբերություն կարող է լինել այն առումով, որ հեղինակի անհատականությունը սուբյեկտիվիզմի տարրեր կարող է ներմուծել պատումի մեջ: Բայց մի կողմ թողնելով տարբերությունների փնտրտուքը՝ կարևորենք հետևյալը. թե՛ կոլեկտիվ, ընդհանուր (ասել է թե՛ բանահյուսական), թե՛ կոնկրետ, հեղինակային (ասել է թե՛ գրական) ստեղծագործությունները ազգային լեզվամտածողության արտահայտիչներ են, ընդ որում, այն ժողովրդական ստեղծագործություններում ամբողջական տեսք ունի, ձեռք է բերում հոգևոր-մշակութային և քաղաքակրթական որոշակի արժեք, իսկ գրական տեքստերում կարող է արտահայտվել մասնակիորեն: Իզուր չէ, որ բարձր են գնահատվում ժողովրդական վիպերգերը: «Ազգային արժեքների համակարգում դյուցազնավեպերը «օգտվում են» առանձնահատուկ կարգավիճակից. նրանց տեղը Սրբազան գրքերի և հանճարների գրքերի միջակայքում է, ընդ որում հանճարների գործերից վեր և Սրբազան գրքերից վար: - գրում է Ա.Առաքելյանը և ապա ավելացնում,- Նման բարձր աստիճանակարգը պայմանավորված է դյուցազնավեպերի՝ ազգային ոգու արտացոլման և պոետիկայի բացառիկ, գրեթե անփոխարինելի բնույթով ու հնարավորություններով»¹: Ընդհանրապես էպոսագիտության և մասնավորապես հայ էպոսագիտության ոլորտներում բավականին հարուստ նյութ է կուտակվել, և էպոսագետներն ու ժողովրդական բանահյուսությանն առնչվող մտավորականները դրանք համարել են իրապես բարձրագույն արժեքներ, որոնք իրենք են դառնում անհատական մշակումների աղբյուր: Իհարկե, հաճախ անհատը՝ իբրև ստեղծագործող, իբրև որոշակի լեզվամտածողության կրող, բանահյուսական նյութին անդրադառնում է զաղափարական ինչ-ինչ նպատակադրումով: Օրինակ՝ Հովհ. Թումանյանը

¹ **Առաքելյան Ա.**, «Նիբելունգների երգից» մինչև «Հուլունքախաղ», Եր., 2023, էջ 3:

Դավթի ճյուղը մշակելիս հարազատ է մնում մեր էպոսին, իսկ Ավ. Իսահակյանը ուղղակի շարունակում է այն: Նյութի նկատմամբ աշխարհընկալման մոտեցումներն են տարբեր. եթե Թումանյանի լեզվամտածողության կիզակետում հայրենիքի ու անկախության գաղափարն է, ապա Իսահակյանի դեպքում՝ ընդգծված սոցիալական խնդիրների արծարծումը: Երկու դեպքում էլ գործ ունենք ազգային լեզվամտածողության երկու կարևորագույն բաղադրիչների դրսևորումների հետ:

Եթե փորձենք աստիճանակարգել դյուցազնավեպերի (հատկապես կոլեկտիվ աշխատանքի արդյունք հանդիսացողների) անցած մշակութականացման ճանապարհը, կունենանք հետևյալ պատկերը՝ իրականություն – պատմություն – պատմական հիշողություն – տեքստ (ստեղծագործություն): Դյուցազնավեպը միանգամից չի կարող վերածվել ազգային բարձրագույն մշակութային արժեքի: Այն այդպիսին է դառնում ժամանակի, դարերի ընթացքում մշակվելով, հղկվելով, բյուրեղանալով: Այդ ընթացքում կատարելագործվում է լեզուն, կայունանում, որոշակիանում են արտահայտչամիջոցները, ամբողջանում են դիպաշարային բնութագրիչները, կերպարները ձեռք են բերում մարդկային ու հոգեբանական խորություն և, որ ավելի կարևոր է, դառնում են ազգային հատկանիշների կրողներ, արտահայտիչներ ու խորհրդանիշներ: Իրար հաջորդող սերունդների «աշխատանքը» վիպերգերում ամրակայում է պատմական տարբեր դարաշրջանների թե՛ պատմական, թե՛ աշխարհընկալման յուրահատկությունները: Այս տեսակետից առավել շահեկան վիճակում են գտնվում իրապես ժողովրդական, կոլեկտիվ ստեղծագործությունները՝ ի տարբերություն հեղինակային տեքստերի: Այսպես, հայկական «Մասնա ծոեր» էպոսը մինչև գրառվելը (19-րդ դարավերջ) իր բանավոր բնույթի շնորհիվ կատարելագործման ավելի երկար ճանապարհ է անցել, քան, ասենք, հեղինակային գերմանական «Նիբելունգների երգը»

կամ վրացական «Ընձենավորը», որոնք արդեն վաղ միջնադարում (12-13-րդ դդ.) գրառվել և վերածվել էին գրական փաստի, որի հետևանքով դադարում է նրանց մշակման գործընթացը:

Այս դիտարկումները՝ կապված դյուցազնավեպերի լեզվի, բովանդակության, ձևի, պատկերային համակարգի հետ, փաստում են մի բան. ժողովրդական էպոսների պարագայում այդ ամենը ժողովրդական լեզվամտածողության արդյունք է: Բհարկե, չի կարելի անտեսել ասացողների փաստը, սակայն նրանք սոսկ վերապատմողներ են: Այլ է հեղինակային տեքստերի հարցը: Մասնավորապես, օրինակ, «Նիբելունգների երգում» ներառված են 5-7-րդ և ապա հետագա դարերում ձևավորված ժողովրդական ավանդազրույցները, պատումները, սակայն «Երգի» անհայտ հեղինակը միավորել է դրանք, հարստացրել նոր սյուժեներով ու կերպարներով, օգտագործել միասնական տաղաչափություն և պոետիկա՝ ելնելով դարաշրջանի(ասպետական) գրականության պահանջներից¹: Սա նշանակում է, որ էպոսում միահյուսելով ժողովրդական ավանդազրույցները, վիպերգերը, ողբերը և այլ պատումներ ու այդպես արտացոլելով գերմանական ժողովրդի աշխարհընկալման, աշխարհայեցողության յուրահատկությունները՝ նա, այնուամենայնիվ, այդ ամենը անցկացնում է հեղինակային իր պրիզմայով: Ավելի կոնկրետ է վրացական էպոսում ներկայացված իրավիճակը: Այն պարզապես պատկերում է 12-րդ դարում Վրաստանում ստեղծված հասարակական-քաղաքական իրավիճակը, իսկ թեման էլ հիմնականում սերն է:

Հայ ժողովրդական էպոսը բազմաշերտ է. դիցաբանական-հեթանոսական, պատմական, քրիստոնեական կենսակերպերի, գաղափարների, պատկերացումների ժողովրդական հանրագիտարան է, և այդ ամենը ճարտարորեն միահյուսված ու ներկայացված անպաճույճ, առանց ավելորդությունների: Գերմանական էպոսը ևս, կրելով վաղմիջնադար-

¹ Առաքելյան Ա., նշվ. աշխ., էջ 6:

յան գաղափարների ու մտածողության ազդեցությունը, պատմական ու, թեկուզև թույլ արտահայտված, դիցաբանական շերտերի հյուսվածք է: Սակայն «Սասնա ծռերն» ունի մի շատ կարևոր ու էական հատկանիշ, որը «Երգը» չունի: Դա մեր դյուցազնավեպի լեզվական միջավայրն է: Բարբառային հայերենը ապահովում է էպոսի ոչ միայն ժողովրդական տարերքը, այլև բուն ժողովրդական մտածողությունը, և եթե նկատի ունենանք մեր էպոսի տարբերակային բազմազանությունը նաև լեզվական (բարբառների) առումով, ապա պարզ կլինի, թե ինչպիսի մշակութային կոթողի հետ գործ ունենք: Մյուս կողմից էլ «Սասնա ծռերի» մշակութային նշանակությունն ավելի է ընդգծվում նրա համադրական բնույթի շնորհիվ. խոսք – երգ – պար եռամիասնությունը ավելի է ընդգծում նրա արժեհամակարգային նշանակությունը (այդպիսի էպոսներ էլի կան): Նշենք նաև, որ կան սյուժետային այնպիսի գծեր, իրավիճակներ, որոնք գրեթե նույն նկարագիրն ունեն էպոսներում, ինչպես, օրինակ, պայքարը թշնամու դեմ, տարբեր մեկնաբանություններով և նպատակադրումներով առկա են և՛ հայկական, և՛ գերմանական, և՛ պարսկական, և՛ այլ էպոսներում:

Գրականագետների ուսումնասիրությունները¹ ցույց են տալիս, որ դյուցազնավեպերում նկատելի է պատկերավորման միջոցների (մակդիր, համեմատություն) սակավություն: Դա պայմանավորված է գեղջկական լեզվի պարզությամբ: Այս դեպքում առաջին հերթին նկատի ունենք մեր էպոսը: Պատումի էպիկական բնույթն արդեն ենթադրում է, որ հոգեկան ապրումների, զգացմունքների մտածումների արտահայտություններն ու նկարագրությունները հասցված են նվազագույնի կամ պարզապես բացակայում են: Ա. Եղիազարյանը դա պատճառաբանում է հետևյալ կերպ. «Չերևացող, բոլորի հայացքից թաքնված ներքին խմորումները էպոսի համար

¹ Տե՛ս, օրինակ, **Եղիազարյան Ա.**, Սասնա ծռեր էպոսի պոետիկան, Եր., 1999, **Մ. Աբելյան**, Երկեր, հտ. Ա, Եր., էջ 474:

արժեք չունեն, որովհետև անհատը, հերոսն իրեն լիովին արտահայտում է իր միջավայրում, նրանից թաքցնելու բան չունի... Էպիկական խոսքը բաց, բոլորին հասկանալի, բոլորին տեսանելի, նշանակալից անցքերի ու իրադարձությունների մասին է»¹։ Բացի դրանից՝ էպիկական հյուսվածքում, ինչպես նկատում է գրականագետը, առավել կարևորվում է գործողությունը, շարժումը, իսկ դա նշանակում է բայերի կիրառության հաճախադեպություն։ Այս իրողությանը ուշադրություն է դարձվել նաև հայ բանագիտության մեջ։ Սրանք ժողովրդական մտածողության յուրահատկություններից են, որոնք համապատասխան լեզվաոճական ձևավորվում են ստանում։ Մասնավորապես սպասելի է, որ գեղջուկ ասացողների անսեթևեթ, պարզ խոսքում իսկապես սակավաթիվ կիրառություններ ունենան համեմատությունները, մակդիրները, գեղարվեստական պատկերավորման այլ արտահայտչամիջոցներ։ Պարզ է նաև, որ զանազան ոճական հնարաններից, արտահայտչամիջոցներից, հուզաարտահայտչական գունավորում ունեցող բառապաշարից «բեռնաթափված» այդպիսի խոսքը պետք է կառուցված լինի միանգամից ընկալելի շարահյուսական կադապարներով։ Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ասացողների խոսքը հյուսված է պարզ նախադասություններով՝ հիմնականում առարկա (անձ) – գործողություն կադապարով, իհարկե, անհրաժեշտության դեպքում կարող են լինել նաև երկրորդական անդամներ։ Բարդ նախադասություններից նախընտրությունը համադասականների կողմն է, այն էլ այն պատճառով, որ պարզ նախադասությունները կարող են միավորվել առավելապես համադասական հարաբերությամբ։ Նախադասությունների բարդ ստորադասական կառույցների կիրառությունը խիստ սահմանափակ է։ Տարբերակների համեմատությունը ցույց է տալիս, որ նշված լեզվական իրողությունները, ինչքան էլ ընդհանուր, այնուամենայնիվ տարբերակներում որոշ

¹ Եղիազարյան Ա., նշվ աշխ., էջ 231-32:

տարբերություններ ունեն: Կարծում ենք՝ լեզվական նման հյուսվածքը կարելի է բացատրել՝ ա) ասացողների անհատականությամբ. անգրագետ կամ կիսագրագետ գեղջուկի լեզվական պատրաստվածության ցածր մակարդակով, բ) տեքստի պահպանողականությամբ. տեքստը փոխել չի կարելի. «Դավիթի պատմությունը հեքիաթ-նաղլ չէ, պատմութեն ա, եղելութեն ա, էդիկ հեքիաթ չէ,... ժողովուրդը զրուցեր ա, մի քիչ բան էվելցրել, ամա եղելութեն ա:... **հիմքը կա** (ընդգծումը մերն է – Թ.Ա.), ամա էվելցրել են, ճոխացրել են» (ասացող Մ. Թորոյան)¹, գ) աշխարհընկալման, մտածողության պարզությունը, որը պահանջում է պարզ լեզվական միջոցների կիրառություն:

Ցանկանում ենք ուշադրություն դարձնել մի հանգամանքի: Էպոսների համեմատական-գուգադրական քննություն կատարելիս պետք է որոշակիորեն սահմանազատել բուն ժողովրդական էպոսները հեղինակայիններից: Վերևում որոշ դիտարկումներ արվեցին բովանդակային առումով նման տարբերակմամբ: Այդպիսի մոտեցում պետք է ցուցաբերել նաև էպոսների լեզվական քննության դեպքում: Բանն այն է, որ հավաքական ժողովրդական ծագում ունեցող էպոսների լեզվական հյուսվածքն ավելի պարզ է, քան հեղինակ ունեցողներինը: Բացի լեզվական միջոցների գործածության սահմանափակությունից (գերակշռում է ընդհանուր հայերենյան բառապաշարը, բացակայում է բարձր ոճի բառաշերտը, առկա են ցածր ոճի բառեր ու արտահայտություններ՝ օրինանք, անեծք, դիմում, անմեղ հայիոյանք և այլն, ասացողի և հերոսի խոսքում ուղղակի կամ անուղղակի խոսք ձևավորելիս գերակշռում են ասացական բայերը, ամեն ինչ ներկայացվում է հիմնականում պարզ նախադասություններով, սակավադեպ են բարդ ստորադասական նախադասությունները, շատ է բարձրաձայն ասված ուղղակի խոսքը և այլն)՝ ժողովրդական էպոսը աղքատ է նաև գեղարվեստական արտահայտչամի-

¹ «Մասունցի Դավիթ», հտ. Բ, Եր., 1944, էջ 250:

ջոցներից: Այսպիսի էպոսները, մասնավորապես «Մասնա ծոերը» ամբողջովին ներկայացված է ժողովրդախոսակցական լեզվի այն տարբերակով, որը հատուկ էր տվյալ բարբառին: Հասկանալի է, որ այս պարագայում ժողովրդական կենդանի ու անմիջական խոսքը երևում է իր ողջ գունագեղությամբ. պարզ, հասարակ գեղջկական լեզու, բայց և դիպուկ ու խորը, որին հայերենը հասել է հազարամյակների ընթացքում: Անդրադարձը մեր էպոսի տարբերակների լեզվական առանձնահատկություններին կբացահայտի ոչ միայն բարբառային ինչ-ինչ իրողություններ, այլև բարբառակիրների տարածաշրջանային աշխարհընկալման յուրահատկությունները՝ կենցաղային մանրուքներից սկսած մինչև մտածողության առավել բարձր ոլորտներ: Լեզվի այդպիսի քննությունը նույնպես կարևոր մոտեցում է հայերենի պատմության ու զարգացման, բարբառագիտության հարցերի, բանահյուսության ու լեզվի կապը ցույց տալու առումով¹: Շատ կարելու է ընկալել և փաստել այն իրողությունը, որ լեզուն և բանավոր մշակույթը կապված են իրար. և՛ լեզուն, և՛ ժողովրդական բանահյուսությունը մշակույթի անբաժանելի մասն են: Բայց լեզուն ունի նաև մեկ այլ կարևոր գործառույթ. այն մշակույթի հայելին է՝ այն իմաստով, որ «Լեզուն արտահայտությունն է երկու կողմի՝ մշակույթի և խոսողի անհատականության, որն աշխարհն ընկալում է լեզվի միջոցով: Լեզուն արտահայտվում է միջավայրում, այն մշակույթից առանձին գոյություն չունի»²:

Լեզվական առումով հեղինակային էպոսները այլ վիճակ կարող են ներկայացնել: Արդեն նշել ենք, թե ինչ ազդեցություն կարող է ունենալ հեղինակը էպոսի բովանդակության վրա. այն, անկասկած, շատ կամ քիչ չափով կրում է հեղինակի մտածողության, աշխարհընկալման ազդեցությունը: Բնա-

¹ Մանրամասն տե՛ս «Մասնա ծոեր», աշխատ. Կարապետ Մելիք-Օհանջանյանի, խմբ. Մանուկ Աբեղյանի, Եր., 1936:

² **David Katan**, Translating Cultures, Manchester, 1999, p. 73:

կանաբար, դրանք ավելի հարուստ բառապաշար, շարահյուսական ավելի ընդարձակ կառույցներ, գեղարվեստական բազմազան արտահայտչամիջոցներ ունեն։ Այսպես, Ա. Եղիազարյանը դյուցազներգություններում առկա շարժման (դինամիզմի) մասին խոսելիս համեմատում է «Սասնա ծռեր»-ը և Հոմերոսի «Իլիական»-ը՝ ցույց տալով, որ դրանցում արտահայտված դինամիզմը տարաբնույթ է. «Սասնա ծռեր»-ում շարժումը, դինամիզմը գերծ է նկարագրություններից, իսկ «Իլիական»-ում այն ուղեկցվում է բավականին ընդարձակ նկարագրություններով, ծավալուն համեմատություններով։ «Այս այն կետերից է, իրավացիորեն գրում է Ա. Եղիազարյանը, որտեղ ասպարեզ են գալիս էպոսների ազգային առանձնահատկությունները, ժողովուրդների գեղագիտական ըմբռնումների անկրկնելի գծերը»¹։ Մի նկատառում. անհամասեռ համեմատություն է այն առումով, որ «Իլիական»-ում նկարագրությունների, համեմատությունների, նաև այլ արտահայտչամիջոցների առատությունը, ոճական բազմազանությունը կարող են պայմանավորված լինել Հոմերոսի անհատականությամբ։ Այդպիսի եզրակացություն կարելի է անել Ֆիրդուսու «Շահնամեի», Ռուսթավելու «Ընձենավորի», «Նիրբելունգների երգի» և հեղինակային այլ էպոսների մասին։ Բոլոր դեպքերում էպոսներում մտածողությանը համահունչ լեզվական միջոցներ են կիրառվել։

Սովորաբար ժողովրդական ծավալուն ստեղծագործությունները աչքի են ընկնում բովանդակային բազմազանությամբ, գաղափարական հագեցվածությամբ, մտքերն ու զգացմունքներն արտահայտելու անկեղծությամբ և գեղջկական միամտությամբ ու պարզությամբ։ Հետաքրքիր է, որ կարդալ-գրել չիմացող, լավագույն դեպքում կիսագրագետ հայ գուսանները, ասացողները մտքի ինչպիսի շողարձակումներ են ունեցել, որ արժևորել են այնպիսի իրողություններ, ինչպի-

¹ Եղիազարյան Ա., նշվ. աշխ., էջ 237-238:

սիք են՝ հայրենիքը, ազատությունը, անկախությունը, մարդասիրությունը, առաքինությունը, ազնվությունը, առաջադրել բարոյական բարձր չափանիշներ: Հովհ. Թումանյանը, բարձր գնահատելով մի շարք էպոսներ, գրում է, որ մեր «էպոսը հայ ցեղի ապրած կյանքի և հոգեկան կարողությունների հոյակապ գանձարանն է ու իր մեծության անհերքելի վկայությունն է աշխարհի համար», իսկ Դ. Դեմիրճյանը «Սասունցի Դավիթը» գնահատում է «որպես հայ ժողովրդի պատմություն և փիլիսոփայություն»¹:

Ավ. Իսահակյանը կարելաֆիննական «Կալևալա» էպոսի մասին խորհրդածելիս ասում է, որ այն «ազգագրական գիտության և ֆոլկլորի տեսակետից անբավ նյութ է պարունակում»²: Այս տեսակետից ժողովուրդների, նրանց աշխարհընկալման վերաբերյալ առավել հարուստ նյութ կարող են տալ այն էպոսները, որոնք այս կամ այն կերպ, առավել կամ պակաս չափով արտացոլում են և՛ դիցական-առասպելական, և՛ պատմական ժամանակաշրջանները. աշխարհստեղծման առեղծվածներից, աստվածների ծննդյան ու գործառույթների հեթանոսական պատկերացումներից, բնության ուժերի շնչավորումից մինչև առօրյա-կենցաղային իրողություններ ու սովորական մարդկային հարաբերություններ: Ահա էպոսներում այս ամենի արտացոլումն է, որ հնարավորություն կարող է տալ հասկանալու տվյալ ժողովրդի հոգեկերտվածքը, կենսական ձգտումները, արժեհամակարգը: Ասվածի լավագույն օրինակը հայոց «Սասնա ծռեր» էպոսն է, որը թեև ձևավորվել է քրիստոնեության դարաշրջանում (8-10-րդ դարեր), սակայն առօրյա-կենցաղայինի հետ որոշակիորեն արտացոլել է նաև հեթանոսական դարաշրջանի պատկերացումները:

¹ «Սասունցի Դավիթ», Ժողովածու՝ նվիրված էպոսի 1000-ամյակին, Եր., 1939, էջ 65:

² **Իսահակյան Ավ.**, Երկերի ժողովածու, հ. 5, Եր., 1977, էջ 265:

Այսպիսով, դյուցազնավեպերը՝ որպես ժողովրդական լեզվամտածողության փաստ, ինքնաճանաչման, ինքնաարտահայտման և ժողովրդի ոգու դրսևորման կերպ, նաև ժողովրդի պատմական հիշողության արգասիքն են, նրա գոյության ու կենսակերպի սնուցիչը, աշխարհաճանաչողության ու աշխարհընկալման բարձրագույն արտահայտությունը: Դրանց օգնությամբ կարելի է հասկանալ տվյալ ժողովրդի հոգեբանությունը, բարոյական արժեքները, աշխարհի ու մարդու նկատմամբ դրսևորած վերաբերմունքը և կենսափիլիսոփայությունը:

Գրականություն

1. Աղայան Հդ., Լեզվաբանության հիմունքներ, Երևան, 1987
2. Առաքելյան Ա., «Նիբելունգների երգից» մինչև «Հուլունքախաղ», Երևան, 2023
3. Եղիազարյան Ա., «Սասնա ծռեր» էպոսի պոետիկան, Երևան, 1999
4. Իսահակյան Ավ., Երկերի ժողովածու, հտ.5, Երևան, 1977
5. 5.«Սասունցի Դավիթ», Ժողովածու՝ նվիրված էպոսի 1000-ամյակին, Երևան, 1939
6. 6.«Սասունցի Դավիթ», հտ. Բ, Երևան, 1944
7. Տոնոյան Թ., Հայերենի տեքստը և լեզվամտածողական արժեհամակարգը, Երևան, 2016
8. David Katan, Translating Cultures, Manchester, 1999, p. 73

■ ТАТУЛ АСОЯН, НОРАЙР ПОГОСЯН

НАРОДНЫЙ ЭПОС КАК ОСНОВНОЕ СРЕДСТВО ВЫРАЖЕНИЯ НАЦИОНАЛЬНОГО ЯЗЫКОВОГО МЫШЛЕНИЯ

Резюме

Лингвистика как отдельная наука сформировалась в 19 веке. Со временем возникли новые лингвистические направления и дисциплинарные дисциплины. Сегодня лингвистика занимается не только изучением языковых единиц и грамматических структур. Это не

только единственный полный способ представления науки, но и выражение народной психологии, истории, культуры, национального облика и существования. Те реалии, которые относятся к народу, нации, могут быть продемонстрированы через тесное единство языка и мышления-языкового мышления.

В данной статье рассматриваются некоторые вопросы, связанные с национально-языковым мышлением в контексте народного эпоса.

Ключевые слова: *лингвистика, эпос, языковая мышления, история, культура народная психология, языковые единицы, грамматическая структура*

■ TATUL ASOYAN, NORAYR POGHOSYAN

THE FOLK EPIC AS A NATIONAL LANGUAGE THINKING MAIN MEANS OF EXPRESSION

Summary

Linguistics as a separate science was formed in the 19th century. Over time, new linguistic trends and interdisciplinary disciplines emerged. Today, linguistics is not only concerned with the study of linguistic units and grammatical structure. It is not only the only complete way of presenting sciences, but also the expression of people's psychology, history, culture, national profile and existence. Those realities related to the people, the nation, can be demonstrated through the close unity of language and thinking-language thinking.

This article examines some issues related to national language thinking in the context of folk epics.

Key words: *linguistic, epic, linguistic units, grammatical structure, history, culture, people's psychology, language thinking*

- **Թաթուլ Արտիկի Ասոյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի դեկան, ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի հնաստիտուտի արդի հայերենի բաժնի վարիչ: Կատարած ուսումնասիրությունները վերաբերում են հայոց լեզվի պատմության, ժամանակակից հայոց լեզվի և նրա մեթոդիկայի, ոճագիտության հիմնախնդիրներին: Հեղինակ է մենագրության, ուսումնամեթոդական ձեռնարկների և 40-ից ավելի հոդվածների:

Татул Артикович Асоян – кандидат филологических наук, доцент, декан филологического факультета Гаварского государственного университета, заведующий отделом современного армянского языка Национальной академии наук Республики Армения имени О.Ачаряна. Проведенные исследования касаются проблем истории армянского языка, современного армянского языка и его методологии, стилистики, а также арменоведческой деятельности Мхитарянов. Он автор более 40 статей, монографий, учебно-методических пособий.

Tatul Artik Asoyan – candidate of philological sciences, associate professor, dean of the Faculty of Philology of Gavar State University, head of the modern Armenian language department of the National Academy of Sciences of the Republic of Armenia named after H. Acharyan. The studies carried out relate to the problems of the history of the Armenian language, the modern Armenian language and its methodology, stylistics, and the Armenian studies activities of the Mkhitaryans. Author of more than 40 articles, monographs, educational-methodical manuals.

asoyan.60@mail.ru

- **Նորայր Բերիկի Պողոսյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ: ՀԱԵ ԱՄՆ Արևմտյան թեմի առաջնորդարանի հայագիտական ծրագրերի և արխիվի պատասխանատու: Ուսումնասիրությունները վերաբերում են հիմնականում հայերենի պատմությանը, գրաբարին, վաղ աշխարհաբարի ձևավորման խնդիրներին: Երկար տարիներ դասավանդել է ԵՊՀ-ում, Ս. Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում, Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանում: Հեղի-

նակ է 80-ից ավելի հոդվածների, 15 մենագրությունների, որոնց թվում են Հովհան Ոսկեբերանի, Վարդան Արևելցու, Կարապետ Պալատեցու աշխատությունների գրաբարից աշխարհաբար փոխադրությունները:

Norayr Berik Poghosyan – Candidate of philological sciences, associate professor. Responsible for Armenian studies programs and archives of the Western Diocese of the Armenian Apostolic Church of USA. The research is mainly related to the history of the Armenian language, Grabar and the problems of the formation of the early period of the New Armenian language. For many years he taught at YSU, at the Etchmiadzin Theological Seminary, and at the Jerusalem Seminary. Author of more than 80 articles, 15 monographs, including translations from the grabar, such as the works of John Chrysostom, Vardan Areveltsi, Karapet Palatetsi and others.

Норайр Берикович Погосян – кандидат филологических наук, доцент. Ответственный за арменоведческие программы и архивы Западной епархии Армянской Апостольской Церкви Америки. Исследования в основном связаны с историей армянского языка, грабара и проблемами формирования раннего периода новоармянского языка. Много лет преподавал в ЕГУ, в духовной семинарии Эчмиадзина, Иерусалимской семинарии. Автор более 80 статей, 15 монографий, в том числе переводов с грабара, таких как произведения Иоанна Златоуст, Вардана Аревелци, Карапета Палатеци и др.

norarm@mail.com